Հետեւեալ գեղեցիկ եւ սրտառուչ չափածոյ գրուածքը՝ որի մէջ արտափայլում է ժամանակի ոգին՝ հեղինակութիւն է Կ. Պոլսոյ Երջանկայիշատակ ուսումնական Նալեան Յակոբի Պատրիարգի՝ որ գտնուեցաւ Հանգուցեալ Ալթինջեան Եփրեմ վարդապետի թղթոց մէջ։ (Ընիկ Ուլահպուզտանցի՝ որ երկար տարիներ Ս. Պետերբուրգի Հայոց Հոգ. Կառավարութեան նախանդամ էր)։ Սորա հետ միասին կան Փեշտմալճեան ուսումնական պատուելի Գրիգոր վարժապետի շատ մի ընտիր ոտանաւորներ եւ ընտրելագոյն նամակներ՝ որք դեռեւս լոյս տեսած չեն՝ եւս քանի մի կարեւոր գրութիւններ՝ որք հետզհետէ ի լոյս կընծայուին Արարատի միջոցաւ։

Ոտանաւոր գեղեցիկ եւ յոյժ ազդու, շարադրեալ ի Նալեան Յակոբ վարդապետէ՝ եւ ի խոր ծերունի պատրիարգէ Կոստանդնուպօլսոյ՝ ի վերջին ժամանակս կենաց իւրոց մերձ ի մահն։

Մենացի՛ր անձն իմ խղճալի՝ ի բարութեանց լիալ ի բաց
յումմէ՞ յուսաս զբարութիւն՝ բարեպաշտօն չի՛ մնաց։
Աղքատն է վէս՝ ծերն շամբուշ՝ իսկ մեծատունն ժլատ՝
զիա՞րդ սպասես խորհուրդ առնուլ՝ խորհրդական չի՛ մնաց։
Անձն իւր անձին ստածու՝ անձին խնդրէ ամենայն այր՝
յումեքէ զոք օգնական՝ ձեռնտու նպաստ չի՛ մնաց։
Համայնից ջանն ի ներկայիս՝ վայելչասցի վայելմամբ՝
իսկ վասն աւուրց հանդերձելոյն՝ հոգածու այր չի՛ մնաց։
Ոմն ի վաճառ՝ ոմն ի գնել՝ կամք չեն ածել հեշտութեամբ՝
յարքայութեան կոչն հարսանեաց՝ գնացող այր չի՛ մնաց։
Համայն վաճառք խարդախածք՝ չափ մեծ և փոքր թիւրեալք՝
մինչ ի կշիռս և ի կշռորդս՝ արդարութիւն չի՛ մնաց։
Վաճառականք ճիրանաւորք՝ ի դաւելոյն գիւտ ածեալք՝
ի վաճառս գինարանաց՝ անջուր գինի չի՛ մնաց։
Խսպառ բարձրեալ են իրաւունք՝ ընդ նոցին սուտ տարածեալք՝
առ մեծամեծս և առ ստրուկս՝ ճշմարտութիւն չի՛ մնաց։
Ամենայն ոք ջանայ պատրել՝ սոսկական փառս ունելով՝
ուստի ի սիրտս և ի լեզուս՝ ստուգութիւն չի՛ մնաց։
Եղբայր եղբօր դժկամակի՝ իբր ընդ օտարս ունելով՝
ընկեր զընկեր ջանայ զրկել՝ սէր ընկերի չի՛ մնաց։
Մեծամեծաց զտանկս կեղեքել՝ փոքունց զմեծամեծս ըմպահակել՝
մինըն անգութ՝ մինն անհլու՝ շահածութիւն չի՛ մնաց։
Համադամիւք փարթամ՝ եղեալ՝ ուտել ըմպել ի խրախճանս՝
իսկ կարօտեալ Ղազարոսի՝ փշրանք հացի չի՛ մնաց։

Պապակելոց հերձան շրթունք, ի ջերմ տապոյ ծարաւոյ,
զողորմութեան զեղուն գետոյ՝ ումպ մի ջրոյ չի՛ մնաց։
Ի թշնամեաց վիրաւորեալ, որք կիսամահ երերի,
դարման վիրաց մեծ գթութեան, Սամարացի չի՛ մնաց։
Ամենայն ուք զոլ Սողոմոն, պարծի յանձին իմաստուն,
ուստի արդարև իմաստնոյն, այժմուս յարգանք չի՛ մնաց։
Երիտասարդք ճակատնեալք, մանկունք կարի անպիտանք,
իսկ յալևորեալ ծառանակիս, ողջախոհ միտք չի՛ մնաց։
Տէրն է բռնի, ծառայն պղերգ, հայրն անխնամ՝ զորդին նեղէ,
այրն ատեցող, կինն անհնազանդ, ի բնաւս համ չի՛ մնաց։
Ազգ ի վերայ ազգի զինեալք, ահեղ գուպարք յածախեալք,
յամեն կուսէ մարտ արհաւիրք, խաղաղութիւն չի՛ մնաց։
Սրածութիւնք, սովք և ժանտախտք, արդէն զմեզ պաշարեալք,
քարեղէնք խանգարեալք, անդորրութիւն չի՛ մնաց։
Համեստութիւնք պարկեշտուհեաց, եղև սպայից ապաստան,
ինչք աւերեալք, անձինք գերեալք, ապաթար պաշտպան չի՛ մնաց։
Հրբոսակք յորդեալք, աւանք քակեալք, շէնք անողորմ խանգարեալք,
սմբակակոխք սահման եղեալ, և այլոց ցաւոց դեղ չի՛ մնաց։
Դատաւորք են կաշառառուք, ընդ համօրէն պաշտօնէից,
իշխանաց առ իշխեալսն, բնաւին գութ չի՛ մնաց։
Բարձեալ է յերկրէ դատաստան, և ընդ օդս է կախեալ,
ընդ նմին և բանք իրաւանց, նշոյլ երբէք չի՛ մնաց։
Հօտք յանապատս ցրւեալք, առ ի կորուստ մոլորեալք,
որ և գթով խնդրող զնոսին, հովիւ մի քաջ չի՛ մնաց։
Տեսուչք նոցին զասրն զգենուն, զկաթն ուտեն են իջանս,
զգայլուստ գայլոց ի տար վանող, հսկող, դիտող չի՛ մնաց։
Մատաղատունկք նորընծիւղք բարձրացուցան յաստիճան,
յորոց նարդեանս կատարելոց, փառք և պատիւ չի՛ մնաց։
Վարդապետք ամեն՝ զշնորհս Հոգւոյն, կաշառօք ծախեն,
Աստուծոյ երկիւղ և ահ, բնաւ մարդոյ մօտ չի՛ մնաց
Նուիրակունք անօրէնք, ուղարկողքն անիրաւք,
տզրկի պէս ծծեն զարիւն, ազգիս խնամող չի՛ մնաց։
Առաջնորդք քաղաքաց աղուեսու բարս ստացեալք,
շողոքորթողք և կեղծաւորք, ուղղադատ այր չի՛ մնաց։
Եպիսկոպոսք Սիմոնականք, աներկիւղք և անաստուածք,
զանարժանս յառաջ կոչեն, բարեաց ընտրող մարդ չի՛ մնաց։
Ի վարդապետս եկեղեցւոյ, որք են հովիւք ոչխարաց,
վասն աշառման զիւրեն գրան, ուղղութիւն չի՛ մնաց։
Քահանայք են սուտակաստպանք, լըպրշողէմք և լրբենիք,
անկեալ յորբունս ի գինարանս, ահ և երկիւղ չի՛ մնաց։
Որովք ազգ մեր աղճատեցան, իսպառ սպառ խանգարեցան,

ամենեքեան յուսահատեալք, յուսադրող ոք չէ՛ մնաց.
Հերձուածողաց ժամն գտեալ, կարի յոյժ կատաղեցան,
և հարկանող զճակատ նոցին յաղթող Դաւիթ չէ՛ մնաց.
Երգ՝ ամենայն գլուխ ի ցաւս, և ամենայն սիրտ ի հոգս,
յոտից մինչև ցծայրս գագաթան, առողջութիւն չէ՛ մնաց.
Ողբալի Յակոբ, մշտալի պատրիարգ, վտարանդեալ կենօք
տարագիր շրջիս, մխիթարող այր չէ՛ մնաց.
Բրաամիք կարի աշխատեցար, յաչաց լուսոյ պակասեցար,
երկար ամօք վաստակեցար, երկանցդ գիտող՝ այր չէ՛ մնաց.
Ո՞ւր իցես նէ՛ազգ, ե՛կ, եկեսց, զի վախճան է աշխարհիս,
թէ հարցանես զգալստենէ քու գուշակ նշմար չէ՛ մնաց.

~~~~~~

Ներկայ տարւոյս Յունվարի 1 էն մինչև Յուլիսի 1 ը Ազգիս Վեհափառ Հայրապետը բարեհաճեցաւ շնորհել հետևեալ Կոնդակները։

Կոնդակ օրհնութեան և խրախուսանաց յանուն միացեալ ընկերութեան Հայոց Կ. Պօլսոյ. ի 5 Յունվ. 1881 ամ. Թ. 1.

Կոնդակ օրհնութեան և խրախուսանաց առ պ. Խաչատուր Պահճէսարայեանց քաղաքագլուխն Ն. Նախիջևանու սակս դիւրացուցանելոյ և նպաստելոյ բացման Արուեստական Հոգևոր Դպրոցի Ն. Նախիջևանու. ի 5 Յունվարի 1881 ամ. Թ. 2.

Կոնդակ օրհնութեան և խրախուսանաց յանուն պարոնայյն Գաբրիէլի Տրապիզոնցեանց, Սերովբէի Յարութիւնեան և Յովհաննէսի Պապասինեան անդամոց Հոգաբարձութեան Նորաբաց Արուեստական Հոգևոր Դպրոցին Ն. Նախիջևանու. ի 5 Յունվ. 1881 ամ. Թ. 3.

Կոնդակ յանուն Գրիգոր Արքեպիսկոպոսի Մուշեղեանց Առաջնորդի Հայոց վիճակին Ատրպատականի, որով յայտնէ զգոհունակութիւն և զուրախութիւն իւր յաղագս նորահաստատ հինգ դպրոցաց Հայոց, որ ի գիւղօրայս Սալմաստու և հանգանակեալ դրամոց յանուն յիշեալ նորոգ հաստատեալ Հայկական ուսումնարանացն, որով և միանգամայն ընդ նմին ըստ խնդրանաց Առաջնորդին առաքէ զկոնդակս հաստատութեան Հոգաբարձութեանց հինգ գիւղօրէից ուսումնարանացն ուրոյն ուրոյն. ի 13 Յունվարի 1881 ամ. Թ. 15.

Կոնդակ յանուն անդամոց Հոգաբարձութեան Նորաբաց ուսումնարանի Հայոց Ղալասար գեղջ Սալմաստու գաւառի, Արզումանի Բաղդալեան Արզումանեանց, Սողոմոնի Սուքիասեան Արզումանեանց, Աղիղի Հարութեան Ջանազիրեանց և Սահակայ Շահգեալդեանց, որով հաստատէ զնոսա ի պաշտօն հոգաբարձութեան և պատուիրէ ջան գործել վասն յառաջադի-
~~~~~~